թողու ուսուցիչ և թարգմանս, և դարձեալ դա յիւրսն։

Եւ յառաջէ ի Բիւզանդոն և ձեռնադրի եկեղեսիաստէս[1] և առնու հրաման. մասին նոցա իշխել ուսուցանել և կարգել դպրոցս՝ կերակրել յարքունուստ զոր և արար իսկ։ Եւ համահաւաքեաց զբոլոր զարմս և զաւակս [Թղ. 17 ա] Հայոց ի մի հաւտ և հովիւ հովւոր, մի կրաւն՝ գիր և դպրութիւն՝ կարգ՝ կանոնք՝ ջջէրաւմ, չալատարա,[ա] յամենայն տեղիս նոցա և մեր։ Եւ ինքն բերկրեալ՝ ուրախ լինէր յարարածն իւր. որպէս էնն ի սկզբանն և արթունն յառաջնումն։ Իսկ՝ զբնաւ խրագործութիւնն ուսուցանեն ճշմարտախաւսն և կորովաբանն. և առակաւս զոր յիշեցաք՝ աւելորդ էր զնոցայն երկրորդել։ Բայց առանց հիման և պատճառի անկար էր սկիզբն առնել շինածոյ, և իրաւ եմ. քանզի իմաստունն շինէ ի վերա արկեալ հիման ճարտարացն։

---

ա. Այս երկու բառը արաբերէն են, որ նախընթաց բառերի միտքն ունին: Լուս. բացատրութիւնն է «նպատակ»․ «նշան բարի»:

1. Խոր. Գ. գլ ԺԷ. Թէոդոս կայսեր առ Սահակ գրած թղթում ասում է. «եւ յառաջին վարդապետսն գրեցաք զՄեսրոպ»: